


նական դրուագ մը կը տեսնուի Վրտեմիսի և Վնաստայ, երկու նոճիի մէջ առած, որոնցմէ մէկուն վրայ Վրե մը կայ աստղի ձևով, և մէկալին վրայ Վուսին: Վարձեալ նոյն քաղքին մէջի կայսերական գրամներուն վրայ կը տեսնուի աստուածուհւոյն դէմքը առանց նոճիի, պարզ արևու և լուսնոյ մէջ քաշուած և վրան ասանկ դրոշմած, Արփեփա Պերկայ:

Վարձեալ Սեպտիմիոս Վուոզի ատեն, Սառան (Սիջագետք) կոփուած միտալի մը երեսը քիչ մը տարբերութեամբ նոյն գրուածքը կը տեսնենք:

Վսանկներ կը գտնուին նաև արևմուտք Սիկիոնի (Վքայիա) կայսերական գրամոց վրայ. նոյնպէս նաև Սեպտիմիոս Վուոզին, Յուլիա Վոմնային, Վետային իրեք պղնձէ գրամներուն վրայ իւրիկիոյ Վպողոնիա քաղքին մէջ:

Վարիզի կայսերական գրատան միտալներու և հնութեանց թանգարանին մէջ պղնձէ պղտի նուիրական գահ մը կայ, որուն վրայ կը տեսնուի Վսուրոց աստուածուհին մեծ նոճոյ մը խորհրդաւոր նմանութեամբ, որ երկու ուրիշ պղտիկ նոճիի ծառերու մէջ տրնկուած է, որոնք Վրեն և Վուսինն են:

Վսիոյ խորաքանդակներն ալ որ հռովմայեցի զօրաց ձեռքովը արևմուտք բերուեցան, վրանին աս դրուագները ունին: Վսոնցմէ մէկը զՍիհր կը ներկայացընէ, ցուլի մը վրայ կեցած, երկու նոճիի մէջտեղը և Վրեուն ու Վուսնի կիսարձաններուն մէջ. ուրիշ խորաքանդակ մ' ալ որ Վէսպատէնի դքսին գրքատունը կը գտնուի, զՍիհր կրօթմանի ծայրը (որն որ Վարսից Ողիմպոսն է) նոճիի մը խորհրդաւոր նշանովը կը ներկայացընէ. աս սրբազան լերան աջ կողմը կը տեսնուի Վրեուն կառքը, իսկ ձախ դին Վուսինը, և երկուքն ալ մէյմէկ նոճիի քով են:



ՄԱՆՐԱՎԷՊ

Փոփոխաւիտ պատկերասան մը:

Վտենօք պատկերահան մը կար, չեմ գիտեր որ քաղքէն, որն որ իր վարպետութեամբը ամէն արհեստակցաց մէջ գերազանց էր. սակայն բնութեամբ այնչափ փոփոխական՝ որ քովը Յոբ համբերողն ալ չէր կրնար դիմանալ:

Վէմք նկարելու մէջ շատ ճարտար էր այս պատկերահանը, այնպէս որ նկարածը կարծես թէ կամ բնականն է և կամ թէ բնութիւնը երկրորդ անգամ զանիկայ ըրած ըլլար. և եթէ իր վրձինը կարենար խօսիլ ալ տալ՝ ուրիշ բան չէր մնար ըսելու, բայց եթէ այս կտաւն ալ կենդանի է: Վսպիսի հրնարագէտ ճարտարութեամբը կրնար իր բաղդը շինել. բայց եկու նայէ որ փոփոխամտութեբ պատճառաւ քիչ մարդիկ յանձն կ'առնուին վերաբերութիւն մը ունենալ հետը. վասն զի, այսօր կ'ուզէր կը նկարէր, վերջը տասնըմէկ օր և ոչ կ'ուզէր անոր վրայօք խօսիլ: Վւելի գէշը ան էր որ ըստ իր բնաւորութեանը կ'ուզէր որ ամէն իրեն եկողներն ալ ուզածին պէս երեսնին յարմարցընեն. այնպէս որ, եթէ այսօր ուրախ ըլլար՝ կէս ծիծաղելով մը զքեզ դիմացը կը նստեցընէր և այնպէս գրեթէ մինչև կէսը կը նկարէր. և թէ որ նոյն միջոցին փոփոխէր իր խելքը, և տխրութիւն մը գար վրան, կ'աւրէր բոլոր նկարածը և կ'ուզէր որ դուն ալ տխուր դէմք մ'առնուս՝ և նորէն կը սկսէր պատկերը: Ոչ երբէք պատկեր մը կը լմնցընէր առանց շատ անգամ դիմացինին դիրքը փոփոխել տալու, ինչպէս որ խելքին կը փչէր: Վսնչափ որ՝ չգիտցուիր թէ ինչպէս կրնար գործ մը լմնցընել այս ունեցած ամէն կատարելութեամբքը: Վսոնց վրայ պէտք է աւելցընել՝ թէ ինչ նեղութիւն էր իրեն ձեռքն իյնալը. վասն զի օր մը մեծ մարդավարութիւն կ'ընէր, ուրիշ օր մը քիչ կը մնար զքեզ խածնելու կամ վրձինները և ներկերը

երեսդ զարնելու , և շան պէս կը կատ-
ղէր : Ասով շատ հուշակուած էր բոլոր
քաղքին մէջ , և մէկը չկար որ չճանչնար
զինքը :

()ը մը ընկերութեան մը մէջ ասոր
վրայ խօսուելով , ինչպէս կ'ըլլայ՝ դի-
պուածով հոն կը գտնուի Վիբբոյ անու-
նով մէկը . ուամկաց կարգէն մարդ մը ,
բայց սիրելի բնութիւն ունեցող , ու
ծաղրածու կերպերովը կարգաւորեալ
ընկերութեանց մէջ ալ հաճելի : — Ա-
սիկա լսելով անուանի պատկերահանիս
վրայօք զանազան խօսքեր , Պարոնայք ,
կ'ըսէ , ինծի այնպէս կ'երևայ որ կրնամ
ինչուան հիմայ իրմէ վշտացեալներուն
վրէժն առնուլ՝ թէ որ ձեզմէ մէկը զիս
հագուեցընէ երկու ժամուան համար ,
այնպէս որ հարուստ պարոն մ'երև-
նամ : — Այո՛ այո՛ , կ'ըսեն ամենքը , և
շուտով կը խոստանան իրեն այնպիսի
զգեստ մը որով կրնար ինչուան ինք-
զինքը թագաւորի տեղ ալ անցընել :
Վիբբոյ ձեռացընելով թէ ինքը դեռ նոր
քաղաք հասած ըլլայ , կը զըկէ իր բարե-
կամներէն մէկը պատկերահանին , որ-
պէս զի իմացընէ իր ազնուականութիւ-
նը և հարստութիւնը , և խոստանայ՝
չեմ գիտեր քանի հազար դահեկան իր
պատկերը նկարել տալու համար :

Այնչափ ստրկի ձայնը շատ ախոր-
ժելի եկաւ պատկերահանին , և ուրիշ
ընծաներու ալ յոյս ունէր , զորոնք
միջնորդը կը խոստանար . համոզելով
զինքը՝ որ գալու օտարականը Արոպայի
որ և է կողմը չէր կրցած գտնել մէկը՝
որ զինքը կարենայ լաւ նկարել . և թէ
լսելով իր մեծ համբաւը , կամօք շատ
ծովեր և երկիրներ անցեր էր , քու ձեռ-
քէդ պատկեր մ'ունենալու համար : —
Անկիրթ մարդիկ ստրկի անունը լսել
նուն պէս , և փառասիրութեամբ շողո-
քորթուած ըլլալով՝ մեծապէս կ'ուրա-
խանան և կը զուարթանան : Վաշնա-
դրութիւնը կ'ըլլայ . կը հասնի որոշեալ
օրը՝ և Վիբբոյ՝ ծառաներ , չորս կողմը
առած , հագուած կապուած կոմսի մը
պէս , կ'երթայ պատկերահանին տու-
նը : — Պատկերահանը մեծ մարդասի-

րութեամբ կ'ընդունի զինքը , Վիբբոյ
ալ շնորհակալ կ'ըլլայ և կը գովէ զինքը
իր մեծ համբաւին համար , և կը հա-
նէ ծոցէն ոսկի ժամացոյց մը և ժամը
իմանալու համար զարնել կու տայ , ը-
սելով թէ ժամը քանիին կը սկսի նկա-
րելը . և ամէն մէկ մատուրներուն շարժ-
մունքին կը տեսնուէր՝ որ զարդարուած
էին փայլուն մասնիներով , ուստի կը
նստի նկարուելու : — Պատկերահանը
մտքէն ստակները կը համրէր , և իբրև
թէ ձեռքին մէջ ըլլային , վասն զի օրի-
նակը իրեն շատ դիւրին կ'երևնար նման
ցընելու : Վիբբոյ լայն երես մ'ունէր ,
այնպիսի գծագրութեամբ որ թերևս որ
և իցէ մարդ ածուխով կրնար նկարել
զինքը . լայն բերան մը , աւելի մանի-
շակագոյն քան թէ կարմիր , խոշոր շըր-
թունքներ՝ աչուները մեծ և երկնագոյն
և մէկ անձուռնի քիթ մը : Վայց այն-
չափ դիւրին չէր բանը , ինչպէս որ
պատկերահանը կարծեր էր :

Վիբբոյ մեծ յարմարութիւն ունէր ի
ծաղր շարժելու , ուզած ատենը կրնար
դիւրին կերպով մը դէմքին վրայ այլա-
փոխութիւն մը երևցընել : Ար նստի
Վիբբոյ պատկերահանին առջև , անոր
ուզած դիրքովը . արուեստաւորը կը սկը-
սի , կը դիտէ երեսը , և գրեթէ պատկե-
րին առջի ձեռքը լմնցուցեր էր : — Վիբ-
բոյին կ'երևայ թէ ժամանակն հասեր
է , ուստի մէկէն ուզած կերպարանա-
փոխութիւնը կու տայ երեսին . պատ-
կերահանը աչքը վեր կ'առնու կը նայի
երեսը , և այս նորութիւնս տեսնալով
ինքներեն կ'ըսէ . ո՛հ սխալեցայ արդեօք
ինչ ըրի . քիչ մը կը կենայ , կը շփէ ա-
չուները և կը լռէ . բայց տեսնելով որ
դէմքը փոխուեր է , կարծեց թէ սխալ-
մունքը իրենն է , ու կ'աւրէ նկարածը :
Վիբբոյ այս դրքին մէջ երկու ժամի
չափ կը կենայ . և պատկերը շատ լաւ
առաջ երթալով՝ շատ անգամ կ'ելլայ
դէմքը տեսնելու համար . և երբոր իրեն
յարմար կը սեպէ՝ դարձեալ դէմքը կը
փոխէ : Պատկերահանը կը նայի և
կ'ապշի , կարծելով թէ խենթեցեր է
դիմացինը . բայց այնպիսի ազդեցու-
թի

մ'ըրեր էին վրան խոստացուած այնչափ դահեկանները՝ որ մտադիւրութեամբ կը համբերէր, մինչև երկու անգամ արեց շինածը շտկելու համար. բայց վերջապէս համբերութիւնը հատած, և ալ չիկարենալով նմանցընել, վրձիններն ալ պատկերն ալ գետին զարկաւ, կանչելով. « Այսպիսի դէմք մը թող սատանաները նկարեն »:

« Եւ այն պատկերահաններն ալ, պատասխանեց Վիբբոյ, որ հաստատուն բնութեան մը տէր չեն, թող չելլան ուրիշի դէմք նկարելու »: և իւրաքանչիւրը իր բանին գնաց. մէկը հայհոյելով, մէկայն ալ ծիծաղելով անցած դիպուածին վրայ:

ԿՈՇԾԻ

ք ն ա կ ա ն

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քաջահաւ¹:

Քաջահաւը կամ Վախսը հին ատենէն ՚ի վեր անուանի թռչուններէն մէկն է, թէ նախնի Ագիպտացոց տուած կրօնական մեծարանացը համար, և թէ այն պատճառաւ վրան զուրցուած այլ և այլ առասպելներուն: Այնչափ պատուաւոր էր Ագիպտացոց առջև այս թռչունը, որ իրենց երկրին նշանակ՝ զանիկա ընտրեր էին, ինչպէս ինչուան մեր օրերը սրբագիր տառերուն մէջ կ'երևնայ. քիչ պատկեր կամ նշանագիր կայ որ ասոր չափ յաճախ նկարուած ըլլայ տաճարներու որմոց, բրգանց, դրոշմածաց և արձաններու պատուանդանին վրայ: Այս թռչունս սպաննողին պատիժը մահ էր, իսկ բնական մահուամբ մեռած քաջահաւը խնամքով կը զմրու-

¹ Յն. ՚ի Ես, զոր նախնիք նաև Յէժ կը թարգմանեն. իսկ Եսայեայ մարգարէութեան մէջ (ԼԳ 11) Յին, որ ուրիշ թռչնոյ մը անուն է. ՅՃ. Լայւս 4: Գուցէ թարգմանիչը ՚ի Ես ի տեղ ինքեզ կարգացած է, կամ գաղափարողք Յէժը Յինի հետ շփոթած:



սէին ու կը պահէին ինչպէս մարդկանց դիակունքը կամ մուսիաները: Վրմերն ալ կ'ըսէին ժողովրդեան որ եթէ անք զգալի արարածոց ձևով արժանի սեպեն երևնալ, թռչնոյս ձևը կ'աւնուն:

Քաջահաւին այսչափ յարգութիւն տալէն վերջը, զարմանք չէ թէ որչափ անհեթեթ առասպելներ ալ շինած են վրան: Վախս ըսին թէ ասոր բեղմնաւորութիւնն ու ծնունդը կտուցէն է: Պիէրիոս անունով մատենագիր մ' ալ հնոց համար կ'աւանդէ թէ արքայիկ օձին կամ բասիլիսկոսին ծնունդը քաջահաւին հաւկրթէն կը կարծէին, և թէ այս հաւկրթը նոյն թռչնոյն կերած օձերուն թոյնէն կը ձևանայ: Օրուցեցին դարձեալ թէ կոկորդիլոսն ու օձերը աս թռչնոյն փետուրին դպչելուն պէս մէկէն անշարժ կը մնային, երբեմն ալ շուտ մը կը սատկէին: Այ միայն երկարակեաց կը սեպուէր այս թռչունս, այլ նաև Արեգ քաղքին քրմերը կը պընդէին թէ կրնայ ալ անմահ ըլլալ. և կ'ըսէին թէ քաջահաւը Ագիպտոսի վրայ առանձին սէր մը ունի, և անոր համար եթէ օտար տեղ փոխադրուի՝ ցաւէն կը